

սարակ մարդու անուշիկ զբաղում է ալսպիսի գործերով, ինչպիսիքն են. օգնել մի պառու կնոջ՝ նորա ծանր բեռը տուն հասցնելու, խնամել վիրաւորածին, իբրև բանուր օգնել աղքատ գիւղացիներին, բժշկել հիւանդներին և այլն. Չէ որ մնալով թագաժառանգ և ժամանակով դահի հասնելով՝ նա կարող էր անհամեմատ մեծ չափերով խնամք տանել հիւանդներին, ծերերին, աղքատների և այլ սրանց նման թշուառների մասին, առաջ բերելով համապատասխան հիմնարկութիւններ. ով ցանկանում է օգնել իւր մերձաւորին, նա իւր իշխանութիւնը, գիրքը պիտի միայն ծառայացնէ ալդ նպատակին, և ոչ թէ հրաժարւի նորանից, բացի ի հարկէ ալն հանգամանքներից, երբ դրանք արդելք են լինում նպատակին հասնելու համար. Ալսպիսի մի արքայազնէ դրքի հերոսը.

Բայց եթէ երևակայենք, որ զրքի հերոսը մի արքայազն չէ, ալ մէկը, որը իւր ձեռքի եկածով աշխատում է թեթևացնել տառապեալների վիճակը, մենք կը տեսնենք, ինչպիսի ինքնազոհութեան ընդունակ է մարդկային բնաւորութիւնը, երբ նա տոգորւած է սիրով դէպի իւր թշուառ եղբայրը, դէպի իւր մերձաւորը և իբրև

մի ալսպիսի անձնաւորութեան պատկեր, ալս գիրքը կունենալ իւր բարոյական ազդեցութիւնը ընթերցողի վերայ. Կասկածելի է միայն, թէ որքան մի ալսպիսի անձնաւորութիւն հասկանալի կը լինի մանուկներին. մեզ թւում է, թէ մանուկներին հասկանալի կարող է լինել ծնողական, որդիական, ընկերական սէրը, բայց ոչ սէր դէպի մարդը առհասարակ, երբ մէկը ալսպիսի սիրով ոգևորւած գործում է, ուչք չ'դարձնելով մարդկալին ապերախտութեան, անձնական թշուառութեան վրա և իւր վարձատրութիւնը իւր խղճից սպասելով.

Բայց չը նալած դորան, գրքով կարող է հետաքրքրութեամբ կարդացել. գոնէ Ռուսաստանում արւած փորձը ալդ է ցոյց տալիս. Մանուկների շրջանում ալդ հեքեաթը կարդալուց չետ, լսող աղջիկներից մէկը բացականչել է՝ «կարծեմ մենք երբէք ալսպիսի լաւ հեքեաթներ չենք կարդացել», իսկ միւսը՝ խելօքներից ասել է՝ «ես կ'ազնաւի, որ ալդ պատմութիւնը երբէք չ'վերջանար» (Համեմատէք «Что читать пароду, հատոր II, երես 401):

B.

ՌԱՅՆԱ ԳԵՕՐԳԻԵՆԻԱՅԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻԻՆԸ (կրճատութեամբ թարգմանւած): Մոսկւա. տպարան Մկրտիչ Բարխուդարեանի, 1891.

փոքրադրի ութածալ 67 երես, տառ № 12, գինն է 5 կոպէկ:

Ալս փոքրիկ ինքնակենսադրութեան մէջ արձանադրւած է բուլղար ժողովրդի իւր վերակենդանութեան համար արած ճիգերի պատմութեան

մի սրտամտիկ էջը, Ռալֆնա Գէօրգիսեան եղել է մի վարժուհի, որ լաւ հասկացած լինելով կրթութեան նշանակութիւնը բոլորովին ժողովրդի համար, ներած է եղել իրան առ միշտ զպրօքին, Բայց ահա մի կողմից հերքեցովինալի լատինի գէպերը, միւս կողմից բաշխողութեան և շերքեցների նոր կատաղի լարձակութիւնները, բռնել են տալիս ալի կայծը, որ բոլորների սրտում մնացել էր հինգ զարշարունակ իբրեւ ազատութեան կարօտ և որ զարգանալու նիւթ էր ստացել նոր երիտասարդութեան քանքով: Վարժուհին լիտ չէ մնում ընդհանուր գործից: Նա դառնում է կենդանի օրինակ ալի բանի, ինչին պէտք է ձգտելին

նորա ռանիկները ապագայում, իբրեւ բոլորար աղգի զաւակներ:

Թարգմանութիւնը կատարւած է բաւականին լաջող. գիրքը կարդացւում է գիւրութեամբ: Նա հասարակ, անպաճուճ, միևնույն ժամանակ գրաւիչ մի սլաւածածք է, որ ունի իւր մէջ ուսանելի կողմեր: Գրքովի իբրեւ գրական հնդկանկութեան՝ պակասութիւնները մոռացւում են շնորհիւ նորա բովանդակութեան, շնորհիւ ալի կենսական խնդիրներին, սրտեց հետևում է ընթերցողը: Գրքովի թուղթը ախոսս շատ է բարակ. ալի պատճառով ընթերցանութիւնը փոքր ինչ ղժարանում է: Գիրնը շատ չափաւոր է և ժողովրդին մատչելի:

Քլ.

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐՔԵՐ

- 1) ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ, ԳՐԻԳՈՐ քահանալ.— Սոխակ:
- 2) «ՀԱՆԴԻՍ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ, գիրք չորրորդ, հրատարակութիւն Մկրտիչ Բարխուդարեանցի», Մոսկւա, 1891, տպ. Մ. Բարխուդարեանցի, գիրն է 2 ր.:
- 3) ԱՂԱՑԵԱՆՑ, Ղ.— «ԱՆԱՀԻՏ»: Թիֆլ. տպ. Նազարեանցի, 1891, գիրն է 15 կողէկ:
- 4) «ՄՈՒՍԻՆԵԱՆՑ, Մկրտիչ».— Շերամապահական խրատներ: Արտատուած «Մշակ» լրագրից: Հրատարակ, Յ. և Մ. Մուրինեանցների Սերմատան, Թիֆլիս, տպ. Տ. Նազարեանի 1891, գիրն է 7 կող.:
- 5) ՌԵԿԼԻԹ, Էլիզէ.— «Ռուսական Հայաստան» կամ «Արաքսի աւազանը», Ուրմիա լիճ և Առաջաւոր Ասիա: Թարգման. Միաբան Վաղարշապատ, տպ. Սուրբ Կաթ. Էջմիածնի, 1891 թ., գիրն է 30 կողէկ: